





ԲՈՅԱՐԻԿ



2023

Ի՞ՆՉ Կ' ԸՍԵՆ ՆՈՒԵՐՆԵՐՈՒ ԳՈՅՆԵՐԸ ՄԵՐ ԱՆՁՆԱՒՐՈՒԹԵԱՆ ՄՎՍԻՆ:

ԸՆՏՐԵՑԵՇ ՁԵՐ ՆԱԽԱՍԻՐԱԾ ԳՈՅՆԸ ԵՒ
ՏԵՍԵՇ:

Եթե դուք ընտրեցիք ԿԱՐՄԻՐԸ կը նշանակէ, թէ
դուք ամեն բան կը զգաք ձեր ամբողջ սրտով եւ
ազդեցութիւն ունիք ձեր միջավայրին վրայ:

ԿԱՊՈՅՏԸ կը խորհրդանշէ երկինքն ու
ծովը, որոնց պէս դուք յաճախ կրնաք ըլլալ
հանդարտ եւ խաղաղ, կամ ուղղակի կարկուտի պէս՝
ամուր եւ ծովուն պէս՝ ալեկոծ:

ԿԱՆԱԶԸ կը խորհրդանշէ հրաշալի
բնութիւնը: Իսկ եթե դուք այս գոյնը ընտրեցիք՝
կը նշանակէ որ դուք ապահով եւ յոյսով
լեցուն անձ մըն էք, ինչպէս նաեւ
դժուարութիւնները շուտով
յաղթահարելու կարողութիւն ունիք:

1



ԴԵՂԻՆԸ ընտրող անձինք ունին ուշադրութիւն գրաւող
անձնաւորութիւն, ճանչցուած են նաեւ իրենց
երշանկութիւն սփոռող հոգիով եւ աշխոյժ ներկայութեամբ:

ՎԱՐԴԱԳՈՅՆԸ ունի կանացի յատկութիւն եւ
ճանչցուած է իր հանդարտութիւն սփոռող յատկութեամբ:

ՆԱՐՆԶԱԳՈՅՆԸ աշխուժութեան, ջերմութեան,
երիտասարդութեան եւ նպատակներու իրականացման
ձգտումին գոյնն է:

ՄԱՆԻՇԱԿԱԳՈՅՆԸ ազնուութիւն եւ
հոգիի հարստութիւն խորհրդանշող գոյնն է:
Ուրեմն՝ եթե կը սիրեք այս գոյնը՝ ունիք նշեալ
յատկութիւնները:

ՍԵՒԾԸ զօրաւոր եւ խորունկ
անձնաւորութեան տեր մարդոց գոյնն է: Այս
գոյնը ճանչցուած է նաեւ իր բարձրորակ
ճաշակով:

ՃԵՐՄԱԿԸ նախընտրող անձինք,
մաքուր եւ անմեղ անձնաւորութիւն ունին: Այս
գոյնը նաեւ կը խորհրդանշէ՝
երիտասարդութիւն:

2





ԻՆՉՊԵՍ ԿՐԻՍՏՈ

ԳՈՂՑԱՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ

Rdt. Մեռ



2023

Բոլոր անոնք, որոնք կ'ապրեին Ովագիւղին մեջ շատ կը սիրեին
Ս. Ծնունդի տօնը, բացի Կրիստոն, որ կ'ապրեր Ովագիւղի հիւսիսը:

Կրինչ չէր սիրեր Ս. Ծնունդը: Ամբողջ Ս. Ծնունդի շրջանը կ'ատեր
ան: Դաճեցէք չհարցնել թէ ինչո՞ւ: Ոչ ոք գիտէ պատճառը:
Դաւանաբար իր գլուխը ճիշդ ձեւով դրուած չէր, կամ
հաւանաբար իր կօշիկները շատ նեղ եղած էին, բայց
ես կը կարծեմ, որ պատճառը անոր սիրտին
սովորականեն երկու անգամ աւելի
պատիկ ըլլալն էր:

- Ահա նորեն իրենց
գուլպաները կը կախեն,-
մոմոաց ան քմծիծաղով:

- Ս. Ծնունդը վաղն է,-
եւ ան իր մատները
սեղանին վրայ թմբուկի
գաւազաններուն պէս
զարնելով մտմտաց,- Ես
անպատճառ պէտք է ելք մը
գտնեմ, որպէսզի արգիլմ Ս.
Ծննդեան գալուստը:

Խթման գիշեր թթու
հայեացքով Կրինչ կը նայեր իր
քարայրեն վար, ատելով բոլոր
ովագիւղիները, կը նայեր տաք,
լուսաւոր պատուհաններուն:
Գիտեր որ ամեն ովագիւղի վարը
զբաղած էր մազամուրճ կախելով:

Բոլոր ովագիւղի աղջիկներն ու
տղաքը շատ կանուխ եւ

գուարթուն պիտի արթևնային, պիտի վազեին իրենց նուերներուն
քով: Որմէ յետոյ... օ՛հ, աղմուկ պիտի ըլլար, աղմո՛ւկ, աղմո՛ւկ,
աղմո՛ւկ, աղմո՛ւկ: Իր ամենէն ատածը աղմուկն էր,
աղմուկը, աղմուկը, աղմուկը:

Յետոյ բոլոր ովագիւղիները՝ մեծ թէ պատիկ,
սեղանին շուրջ պիտի նստեին եւ Ս. Ծնունդ պիտի
տօնեին:

**Պիտի տօնեին, տօնեին
տօնեին, տօնեին,
տօնեին...**

Պիտի տօնեին կարկանդակով
եւ խորոված հաւով, զորս
Կրինչ չէր կրնար հանդուրժել:

Ապա անոնք պիտի ընեին բան
մը, որմէ Կրինչ կը գարշէր:

Բոլոր ովագիւղիները երկար
թէ կարճ, իրարու շատ մօտ
կանգնած, Ս. Ծննդեան
զանգերու զօղանշին հետ, ձեռք-
ձեռքի պիտի սկսեին երգել:
Պիտի երգեին, երգեին, երգեին,
երգեին եւ երգեին: Եւ որքան
Կրինչ կը մտածէր ովա-
գիւղիներուն երգելուն մասին,
այնքան աւելի շուտ կ'ուզէր այս
ամենուն վերջ տալ:

- Ինչպէս յիսուներեք տարի
հանդուրժած եմ այս ամենոն,
ես պէտք է անպատճառ





ընկճեց Կրիսը:

- Ո՞չ,- ըսաւ ան,- եթէ եղերու չգտնեմ՝ ես կը ստեղծեմ հատ մը:

Եւ ան իր շունը՝ Մաքսը, կանչելով կարմիր վզկապ մը անցուց վիզին, եղջիւր մըն ալ կապեց անոր զլխուն:

- Ես գիտեմ ընելիքս,- ըսաւ չարախինդ: Կրինչ Կաղանդ Պապուկի հագուստ պատրաստեց եւ խնդա՞ց, խնդա՞ց:

- Ի՞նչ հրաշալի կրինչական հնարք, այս մուշտակով, այս գլխարկով ճիշդ ու ճիշդ Կաղանդ Պապուկն եմ:

Ապա Կրինչ իր հետ առնելով պարապ տոպրակներ, սայլակը նստաւ, Մաքսը կապեց սայլակին եւ սլացաւ Ովագիւղ, ուր բոլորը մշի՞-մշի՞կ կը քնանային:

արգիլեմ Ս. Ծննդեան գալուստը, բայց... ինչպէ՞ս,- բարկացկոտ մտմտաց Կրինչ:

Եւ ան միտք մը յդացաւ, սարսափելի միտք մը: Կրինչ հրաշալի եւ նոյնքան սարսափելի գաղափար մը յդացաւ:

- Սիայն եղերուի մը պէտք ունիմ,- ըսաւ: Եղերու գտնելը դժուար էր, բայց այդ մէկը

Պատուհաններէն ներս մութ էր: Զիւնը հանդարտօրէն կը տեղար: Բոլոր գիւղացիները անո՛ւշ- անո՛ւշ կ'երազեին: Կրինչ կանգնեցաւ տնակի մը քով. - Ահա եւ մեր առաջին կայանը,- ըսաւ եւ տոպրակ մը առնելով ծխնելոյզէն վար սահեցաւ: Դժուար էր ծխնելոյզէն սահիլը, բայց եթէ Կաղանդ Պապան կրնար հոնկէ իջնել, ուրեմն Կրինչն ալ կրնար: Ան կրակարանն տնկեց գլուխը եւ տեսաւ, որ գուլպաներ շարուած են:

- Այս գուլպաները առաջինը պիտի երթան,- ըսաւ ան: Ապա չար ժպիտով դուրս ցատկեց կրակարանն եւ հաւաքեց բոլոր նուերները՝ գնդիկով գէնքեր, հեծանիւ, անիւով կօշիկներ, թմբուկներ, բոլորը տոպրակներու մէջ գետեղելով զանոնք ծխնելոյզէն վեր նետեց, այսուհետեւ ան մտաւ խոհանոց եւ սկսաւ խնճոյքի ուտելիքները հաւաքել մանաւանդ կարկանդակներն ու խորոված հաւերը: Ուտելիքներն ալ տոպրակներու մէջ դնելով ծխնելոյզէն վեր դրկեց:

- Եւ հիմա,- ըսաւ ան,- տօնածառը պիտի հաւաքեմ: Երբ կրինչ տօնածառը ծխնելոյզին մէջ կը տեղաւորէր լսեց փոքրիկ ձայն մը, երբ եսեւ դարձաւ տեսաւ որ փոքրիկ աղջնակ մըն էր՝ Սինտի Լուս: Սինտին ըսաւ.

- Կաղանդ Պապո՛ւկ, ինչո՞ւ մեր Տօնածառը կը տանիք: Ինչո՞ւ:

Կրինչ իր հագուստով կրցած էր խաբել փոքրիկ աղջիկը, ան շոյեց աղջկան գլուխը գաւաթ մը կաթ տուաւ անոր, ծառը տեղաւորեց ծխնելոյզին մէջ եւ ըսաւ.



5



6



- Իմ սիրելի փոքրիկ թռոնիկ, միթէ՞ չես տեսներ որ այս ծառին լոյսերեն մաս մը աւրուած են, ես ծառը կը տանիմ աշխատանցս, որպէսզի նորոգեմ անոր լոյսերը: Յետոյ ետ պիտի բերեմ:

Եւ Կրինչ բարձրացաւ ծիսնելոյզեն, ան նոյնիսկ տարաւ կրականի փայտերը, իր ետին ձգեց փշրանք, որ միայն մուկ մը կը կշտացնե:

Կրինչ նոյնը ըրաւ մնացեալ գիւղացիներուն տուներեն ներս, լոկ մուկերուն համար փշրանք ձգելով...

Արեւածագեն քառորդ ժամ առաջ եր...

Բոլոր ովագիւղիները դեռ քնացած եին, երբ Կրինչ իր սահնակը նուերներով լեցուց եւ սկսաւ բարձրանալ: Հազար քայլ քայլած եր քրամփիթ լեռն ի վեր, ուրկէ վար պիտի նետեր բոլոր նուերները:

- Բո՛ւհ, բո՛ւհ, բոլոր գիւղացիները այսօր պիտի արթննան եւ պիտի տեսնեն, որ Ս. Ծնունդ չկայ: Երբ արթննան եւ գիտեմ, թէ ի՞նչ պիտի ընեն: Իրենց բերանները պիտի բանան, մեկերկու վայրկեան այդպէս պիտի մնան, ապա բոլո՛ր ովագիւղիները պո՛ւ, պո՛ւ պիտի լան:

Կրինչ աղմուկ մը լսեց, կանգնեցաւ պահ մը որ աւելի լաւ լսէ զայն: Աղմուկը ձիւներեն վեր կը բարձրանար, հանդարտօրեն սկսաւ բարձրանալ, ապա զօրացաւ: Բայց ձայնը տխուր չէր: Ինչո՞ւ այդ ձայնը ուրախ կը ինչէր: Պետք չէ այդպէս ինչէր: Զայնը ուրախ էր, շա՛տ ուրախ:



Ան նայեցաւ Ովագիւղին, աչքերը շփեց, թարթեց եւ ինչ որ տեսաւ շատ մեծ անակնկալ մըն էր իրեն համար:

Բոլոր ովագիւղիները երկար թէ կարճ, կ'երգէին:

Առանց նուերներու: Կրինչ ԶԵՐ ԿՐԹԱԾ Ս. ԾՆՍԴԵՎՆ ՏՕՆԸ ԳՈՂՆԱԼ: Ս. ԾՆՈՒՆԴԸ ԵԿԱԾ ԷՐ:

Եւ Կրինչ ձիւնին մէջ սառած ոտքերով կանգնած մնաց:

- Ինչպէ՞ս կրնայ ըլլալ,- խորհեցաւ Կրինչ,- Ս. Ծնունդը եկած է առանց ժապաւէններու, առանց նուերներու, առանց պարկերու:

Ապա Կրինչի միտքէն արտասովոր բան մը անցաւ:

- Յաւանաբար Ս. Ծնունդը նուերներով չէ որ կու գայ: Յաւանաբար Ս. Ծնունդը աւելի մեծ իմաստ ունի:

Եւ ի՞նչ պատահեցաւ այդ օր: Ովագիւղիները կ'ըսեն որ Կրինչին սիրտը երեք անգամ աւելի մեծցաւ այդ օր: Եւ երբ անոր սիրտը այլեւս նեղ չէր՝ ան արեգակի շողերուն հետ վերադառնուց բոլոր նուերները, ծառերն ու ուտելիքները: Եւ ան, Ս. Ծննդեան առթիւ, ինըն իր համար խորոված հաւ պատրաստեց:

**Անգերենէ թարգմանեց՝
Վեհան Պարտումեան**









**ԵԿՇՔ ԱՅՍ ՏԵՐԻ
ՏՈՆԱՏՎՈՒՆ ՓԱՅՑԼՈՒ
ԱՎՏՈԾ ՄԵՐ ԶԵՐԵՐՈՂ
ՊԱՏՐԱՍՏԵՆՔ**

ԲԱՑԱՌԻԿ



2023



Դետելինք քայլերուն:

- 1- Հաստ թուղթի մը երկու երեսները մեր նախասիրած գոյսի շրաներկով ներկենք:
- 2- Երկու երեսները չորսակի ետք, խեժ դնենք թուղթին վրայ եւ անոր վրան փայլք սրսկենք:
- 3- Կարկինը 15 ս.մ չափով բանանք եւ կլոր մը գծենք թուղթին ճիշդ մշտեղը, կտին տեղը պահելով:
- 4- Նկարին համեմատ չորս հաւասար երկարութեամբ գիծեր գծենք՝ մշտեղի կտին անցնելով:
- 5- Նկարին համեմատ ութը հաւասար կարճ գիծեր գծենք: (Իրաքանչիր երկու երկար գիծի միջեւ՝ մեկ կարճ գիծ):
- 6- Աստղին շրջանակը գծենք, իրաքանչիր կարճ գիծի

վերջաւորութիւնը երկար գիծերուն վերջաւորութեան միացնելով:

- 7- Աստղին մարմինը մկրատով կտրելեն ետք, սուր մատիտով մը անցնինք գծուած գիծերուն վրայէն, առանց աստղը կտրելու:

- 8- Որպեսզի մեր աստղը եական ձեւ մը ստանայ, երկար գիծերը՝ դեպի վեր, իսկ կարճ գիծերը դեպի վար ծալենք ամրութեամբ:

- 9- Նկարին մէջ տեսնուած խխունչին նման խխունչ մըն ալ մենք խեժով փակցնենք մեր գեղեցիկ աստղին վրայ, որ արդեն կազմուեցաւ ու երկար մատիտով մը անոր յարմարագոյն կեցուածքը տանք:





ՈՎԵ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Նիքոլաս անունով հարուստ մարդ մը կ'ապրեր Յիւսիսային բեւեռը: Ան ազնիւ եւ առատաձեռն մարդ մըն եր: Նիքոլասի համար անսահման հաճոյք եր մարդոց անակնկալ նուերներով ուրախացնելը: Ան ուներ նաեւ յատուկ նախասիրութիւն մը, որ փայտով պատրաստուած խաղալիքներ շինելն եր:

Կաղանդի օրը կը հասնի: Նիքոլաս կ'ուզէ յատուկ ձեւով ուրախացնել իր շուրջ գտնուող փոքրիկները: Առաւօտուն իր աթոռին վրայ նստած պահուն, յանկարծ միտք մը կը յղանայ: Կ'որոշէ շա'տ-շա'տ մեծ թիւով փայտէ խաղալիքներ պատրաստել եւ գիշերը տուներուն ծխնելոյգէն իջնելով, այդ խաղալիքները մեկիկ-մեկիկ գետեղել կրակարաններէն կախուած իւրաքանչիւր

փոքրիկի գուլպային մէջ:

Գիշերը կը հասնի, ժամը այլեւս ուշ է եւ Նիքոլաս անհամբեր կը սպասէր որ բոլորը քնանան, իսկ երբ կը քնանան, ան կը բարձրանայ առաջին տան տանիքը եւ ծխնելոյգէն վար ցատկելով նուերները կը դնէ կրակարաննեն կախուած փոքրիկներուն գուլպաներուն մէջ: Այսպէս, ան կ'այցելէ եօթ տուն, սակայն շա'տ կը յոգնի: Կ'որոշէ հանգչիլ, որպէսզի դարձեալ իր ուժը հաւաքէ եւ շարունակէ փոքրիկներուն նուերները բաժնել: Բայց այս ձեւով կարելի չէր բոլորին ճիշդ ժամանակին նուերները հասցնել: Ուստի՝ Նիքոլաս տուն կը վերադառնայ եւ կը դիմէ իր եղնիկներուն, որպէսզի օգնեն զինք նուերները բաժնելու: Ան իր նուերներով լի պարկը կը դնէ սայլակին մէջ եւ եղնիկներուն կը կապէ ու դարձեալ ճամբայ կ'ելլէ:

Ամեն կողմ ձիւն կը տեղար: Նիքոլաս եւ եղնիկները տակաւին շա'տ քիչ ճամբայ կտրած էին, երբ վա՛յ, սայլակը կը միսրճուի ձիւնին մէջ: Սակայն Նիքոլաս, առանց վհատելու, կը փորձէ այդ սայլակն ու եղնիկները միասին դուրս բերել հաւաքուած ձիւնին մէջեն: Սինչ կը քաշէր, կը քաշքշէր, յանկարծ իրեշտակ մը կը յայտնուի իր դիմաց եւ կ'ըսէ.

– Նիքոլա՛ս, դուն բարի մարդ ես: Կ'ուզեմ քեզի օգտակար դառնալ:





Այս կ'ըսէ, եւ կը դպչի եղինիկներուն:
Նիքոլաս ապշած կը նայի եղինիկներուն,
որոնք կը սկսին վեր բարձրանալ եւ
կը պատրաստուին թռչելու:

Այժմ՝ այս եղինիկները յատուկ դարձան ու
պիտի կարողանան թռչիլ, - կը շարունակէ
Յրեշտակը:

Ապա, Յրեշտակը իր ձեռքը կը շարժէ ու
Նիքոլաս ի՞նչ տեսնէ... խումբ մը կանաչ
հագուստներ հազած, երկար կարմիր
գլխարկներով ու ծիծաղելի երկար
ականջներով գաճաճներ:

- Այս գաճաճները արագ աշխատող
օգնականներ են: Անոնք կրնան շուտով բոլոր
տեսակի նուերներ պատրաստել եւ հասցնել
փոքրիկներուն տուները, - կ'ըսէ հրեշտակը
Նիքոլասին:

Նիքոլաս ապշած վիճակի մէջ եր տակաւին:
Անոր ուրախութիւնը անսահման եր:
Այսպիսով՝ բոլորը միասին սայլակին մէջ

կը տեղաւորուին եւ եղինիկներուն
հետ կը սուրան դեպի երկինք, Նոր Տարուան
շունչը տարածելու ամեն տեղ:

Նիքոլաս կ'ըսէ.

- Ճնորհաւոր Նոր Տարի՛, բոլորին ըլլայ բարի՛...
Յաջորդ առաւօտ, փոքրիկները կ'արթննան եւ
կը մօտենան կրակարաններուն, անոնք հետաքրքրութեամբ
նուերները գուլպաներէն դուրս կը հանեն եւ
գուարճութեամբ կը գոչեն.

- Ինչ գեղեցիկ է մեր նուերը: Ինչ հետաքրքրական է
մեր նուերը...

Ուրեմն՝ սիրելի՛ փոքրիկներ, ասիկա
Նիքոլասին պատմութիւնն է, որ ինչպէ՞ս
տարիներուն ընթացքին, մեր բոլորին շատ
սիրելի Կաղանդ Պապուկը դարձաւ:





ԲԱՅԱՆԻԿ



2023

ԿԱԿԱՆԴ ՊԱՊՈՒԿԻՆ ԿՈՐՍՈՒԱԾ ԵՂՆԻԿԸ

Նոր Տարուան մեկ օր մնացած էր, միայն մեկ օր, երբ Կաղանդ Պապուկը շուտարած էր աճապարանքով յայտնուեցաւ մեր տան դիմաց: Դուռը թակե՛ց ու թակե՛ց, ծեծե՛ց ու ծեծե՛ց, իսկ երբ պատասխան չառաւ, դուռը հրեց ու ինքզինք ներս գտաւ: Ան հետալով պատին կոթնեցաւ էր ըսաւ.

- Եղնիկս, եղնիկս կորսուած է: Ես ալ դուռ-դուռ զինք կը փնտռեմ: Ներեցէ՛ք սիրելիներ, այսպէս ներս մտնելուս համար, բայց ես շա՛տ տխուր, շուտարած ու կորսուած եմ եղնիկիս պատճառով: Կը տեսնէ՞ք, նոյնիսկ Կաղանդ Պապան կրնայ տխուր օր ունենալ: Անցեալ շաբաթ, սկսայ նոր եղնիկ մը մարզել, որովհետեւ իիները յոգնեցա՛ն, պաղեցա՛ն եւ ըսին, թէ այլեւս իրենց կրնակները կը ցաւին: Ես ունեի նոր, դեղին ու լուսաւոր քթիկով, խելացի եւ արագաշարժ եղնիկ մը, որ սայլիս առաջնորդութիւնը ստանձնած էր, սակայն

ահա՛ ան կորսուած է հիմա: Ըսէ՛ք ինծի, ի՞նչ ընեմ, որպէսզի հասնիմ մնացած բոլոր նուերները ճիշդ ժամանակին հասցնելու աշխարհի տարբեր մասերը գտնուող փոքրիկներուն: Ա՛յս, Պաքին կորսուած է: Ես ալ այլեւս շա՛տ ծեր եմ այս գործը ամբողջովին առանձին կատարելու: Կ' աղաչեմ ձեզի, օգնեցէ՛ք, Պաքին տակալին նոր կը սորվի, հաւանաբար փորձանքի մը հանդիպի, օգնեցէ՛ք որպէսզի միասնաբար գտնենք զինք եւ մեր գործը լիուվի կատարենք: Ուրեմն՝ խնդրե՛մ, արա՛գ...

Այսպիսով՝ ես եւ մայրիկս, Կաղանդ Պապուկին հետ միասին տեղաւորուեցանք բեռնասայլին մէջ: Իսկ միւս ութը եղնիկները՝ հանգչեցան մեր տաքուկ կառատան մէջ, մինչ մեր վերադարձը:

Կաղանդ Պապուկը ըսաւ.





- Չմոռնանք որ Պաքիին

դեղին քիթը լոյս կ'արձակէ: Պետք է
ամէն գնով գտնենք զինք...

Միասին ճամբայ ելանք Պաքին փնտռելու,
միշտ յուսալով, որ անոր դեղին քթիկը մեզի
պիտի օգնէ աւելի դիւրին նշմարելու զինք
զօրաւոր ծիւնամրիկին մշջն: Երկա՛ր քիլոմետրեր
կտրելէն ետք, յանկարծ այդ մուլք գիշերուան մէջ
նկատեցինք եղջիւր մը, որ լոյսի մշջ կը փայլէր:
Ահա հո՞ն կեցած էր խե՛ղճ Պաքին, ամբողջովին
կորսուած, սառած, որուն մուշտակը նոյնիսկ
ձիւնով ծածկուած էր: Կաղանդ Պապուկը
անմիջապէս իջաւ սայլակէն, խրթխրթան ձիւնին
մշջ կոխելով ըսաւ.

- Օ՛հ, որքան երջանիկ եմ Պաքիին փայլուն լոյսը
տեսնելով: Եկո՛ւր, Պաքի՛, - կանչեց ան:

Պաքին եւ Կաղանդ Պապուկը շա՛տ ուրախացան:
Կաղանդ Պապուկին այտերը վերստին կարմրեցան
Պաքիին բացակայութեան ընթացքին դեղինած
ըլլալէն ետք, եւ աչքերը ուրախութեան
արցունքներով լեցուեցան:

Բայց Պաքին մինչեւ ոսկորները
սառած էր:

- Պետք է շերմացնենք Պաքին,- ըսաւ
մայրիկս,- ուրեմն, եկէ՛ք զինք տուն
տանինք:

Առինք Պաքին, բերինք զինք մեր
տունը եւ հալեցուցինք մուշտակին
վրայ կուտակուած ձիւնը, ետքը,
Կաղանդ Պապուկին միւս ուր
եղնիկները դուրս ելան, ողջունեցին



Պաքին եւ պատրաստուեցան շարունակելու
իրենց ճանապարհը:

Սակայն Կաղանդ Պապան մեկնելէն
առաջ, նայեցաւ ինծի եւ ըսաւ.

- Կ'ուզեմ գիտնաս, որ ես իսկապէս
կը սիրեմ Պաքին: Ան
շատ լաւ եղնիկ մըն է:
Երբ կորսուեցաւ, շատ
մէծ տիսրութիւն եւ վախ
պատճառեց ինծի: Շա՛տ
շնորհակալ եմ ձեր

ցուցաբերած օգնութեան համար, շատ
շնորհակալ եմ ամէն ինչին համար:

Այս ըսաւ Կաղանդ Պապան ու աճապարանքով
մօտեցաւ տան դրան ու դուրս ելաւ: Սակայն հազիւ
դեռ նոր ելած էր, վազելով ետ դարձաւ, մինչեւ
կզակին հասնող խոշո՛ր պարկ մը լի
նուերներով: Ան մօտեցաւ մեր տան
տօնածառին եւ ամբողջ պարկը այդտեղ
պարպեց:

Իսկ իհմա ժամանակը հասաւ
Կաղանդ Պապուկին մեկնելուն: Ան
սիրելի Պաքին իր հետ առաւ ու
եղ ն ի կ ն ե ր ո ւ ն հ ե տ վ ե ր
բ ա ր ձ ր ա ն ա լ ո վ գ ո չ ե ց ,
«ԸՆՈՐՅԱԼՈՐՆՈՐՏԱՐԻՇ»:

Գլուխս պատուիանեն դուրս
հանեցի ձիւնոտ գիշերուան մշջ եւ
տեսայ Պաքիին դեղին ու
փայլուն լոյսը, որ ամբողջ
ե ր կ ն ք ի ն ճ ա մ բ ա ն
կը լուսաւորեր...



ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ՆՈՒԵՐԸ

Միհրանն ու մայրիկը ամէն տարուան 31 Դեկտեմբերին կը ստանձնեին ընտանիքին նուերներ գնելու պարտականութիւնը: Միհրան շատ մեծ հաճոյքով կը կատարէր այդ գործը:

- Այս գործը յոգնեցուցիչ է, սակայն՝ շատ հաճելի, իսկ նախասիրած բաժինս զանոնք գոյնզգոյն թուղթերով ծածկելն է,- կ'ըսէր անյածախ:

- Ուրեմն՝ այս տարի եւս այս պարտականութիւնը քեզի պիտի յանձնեմ, Միհրան,- ըսաւ մայրիկը:

- Շատ սիրով, մայրիկ,- պատասխանեց Միհրան եւ միասին ուղղուեցան դեպի շուկայ:

Անոնք այս տարի եւս, սովորականին պէս իրենց նախասիրած խաղալիքներուն շուկան գացին եւ իրաքանչիրին համապատասխան նուերներ ընտրեցին:

Երբ աւարտեցին, անոնք վերադարձի ճամբան բռնեցին: Սակայն ճամբան վրայ Միհրան տեսաւ իր տարիքին մօտիկ, իին զգեստներով փոքրիկ մը, որ մո՞ս կը ծախէր: Ան կ'առաջարկէր Միհրանին, մայրիկին եւ բոլոր անդամներուն, որպէսզի մոմ գնեն իրմէ: Ամէն մարդ չէր մօտենար, սակայն Միհրան այդ փոքրիկներէն էր, որ չէր ուզեր անտարբեր կեցուածք մը ցուցաբերել:

- Մայրիկս շինած է այս մոմերը: Ես ալ կը փորձեմ ծախել զանոնք, որպէսզի այսօր՝ Նոր Տարին ընդունելու ժամանակ,



մոմերուն գինով ընթրիք ապահովենք մեզի,- ըսաւ անծանօթ փոքրիկը:

- Օ՛հ, մայրիկ, ինչպէս ան Նոր Տարուան օրով, այս ձիւներուն մէջ նստած կը փորձէ ընտանիքին ընթրիքին գումարը ապահովել,- ըսաւ Միհրան սրտի կսկիծով:

- Լա՛ւ, ես բոլոր մոմերդ գնելու պատրաստ եմ,- ըսաւ մայրիկը անծանօթ փոքրիկին,- պայմանով՝ որ այսօր իրիկուն մեր տունը զատ եւ մեզի հետ ընթրես:

- Բա՛յց, ես... ը՛, ես...

- Կրնա՞ս մեզ ձեր տունը առաջնորդել: Կ'ուզեմ ծանօթանալ ընտանիքիդ,- շարունակեց Միհրանին մայրիկը:

- Այո՛, իսկապէս կ'ուզենք ընտանիքիդ ծանօթանալ: Ո՞ւր է ձեր տունը,- հարցուց Միհրանիկ:

- Անունս ճորճ է, իսկ տունս այստեղ է,- պատասխանեց փոքրիկը եւ ցոյց տուաւ յարդերով շինուած փոքր խրճիթ մը:

Միհրանը, մայրիկն ու ճորճը ուղղուեցան ճորճեսց



ԿԱՌՈՒ



ԲՈՅԱՆԻԿ



2023

Բնակած վայրը: Անոնք ճորճին առաջնորդութեամբ ներս մտան եւ տեսան մայրիկը, որ նորածին քոյրիկը շալկած կը քնացներ: Միհրանին մայրիկը ինքզինք ծանօթացնելէ Ետք, ճորճին մօր առաջարկեց որ միանան իրենց, միասնաբար դիմաւորելու Նոր Տարին:

- Օ՛հ, դուք շատ ազնիւ եք, տիկին, ճորճը իր հայրը կորսնցուցած է քանի մը ամիս առաջ եւ իհմա՝ ստիպուած ամբողջ օրը փողոցը կ'անցընէ մեզի ուտելիք ապահովելու համար: Ան ամեն տարի կը սպասէր Կաղանդ Պապուկին, որ այս տարի կորսնցուցած է մեր տան ճամբան,- ըսաւ ճորճին մայրիկը:

- Ճո՞րճ, խնդրե՞մ, եկէք մեր տունը: Վստահ եմ, որ միասին շատ լաւ ժամանակ պիտի անցընենք: Ձեզի համար ալ անակնկալներ ունիմ,- ըսաւ Միհրանիկ խանդավառութեամբ:

- Լա՛ւ, խնդրեմ մեկ վայրկեան տուէ՞ք մեզի, որպեսզի պատրաստուինք եւ միանանք ձեզի,- պատասխանեց ճորճին մայրը, ապա անոնք միասնաբար շարունակեցին իրենց ճամբան ու հասան Միհրանիկենց տունը:

Ճորճ առաջին անգամ ըլլալով տօնածառ շտկեց Միհրանիկին օգնութեամբ ու անոր տակ գոյնզգոյն լոյսերով պատրաստուած մսուրը գետեղեց: Ետքը՝ նստան սեղանին շուրջ ու այդ գիշեր երկու ընտանիքները միասին համեղ ընթրիքը ըմբոշինեցին: Ծատ չանցած, Միհրանիկին



21

մայրը կաղանդ Պապուկի հագուստներով ծպտուած ներս մտաւ եւ բոլորին սրտերը շերմացուց գեղեցիկ նուերներ բամնելով: Բոլորը շա՛տ ուրախ էին, իսկ ճորճ՝ աչքերուն չեր հաւատար: Ան երբուընէ՛ այսքան ուրախ չեր եղած: Երբուընէ՛ նուեր չեր ստացած: Անսահման եր նաեւ ճորճին մօր ուրախութիւնը: Ան իր զաւակները զուարթ, կուշտ եւ հանգիստ տեսնելով ըսաւ.

- Ընորհակալութիւն, սիրելինե՛ր: Ձեզի նման մարդիկ քիչ են աշխարհի վրայ: Կը մաղթեմ, որ ձեր ալ փափաքները իրականանան եւ սրտերը միշտ շերմ մնան:

- Ձեզի ալ շնորհակալութի՛ւն, որ չմերժեցիք մեր իրաւերը եւ ճոխացուցիք մեր օրը: Մենք միշտ պատրաստ ենք ձեզ ընդունելու,- գոհունակութեամբ պատասխանեց Միհրանին մայրիկը:

- Կրկին շնորհակալ ենք: Ընորհաւո՛ր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ ձեր բոլորին,- ըսաւ ճորճին մայրիկը եւ զաւակներուն հետ տուն վերադարձաւ:

- Մայրի՛կ, ես շատ երշանիկ եմ, որ մենք այս օրով ընտանիք մը ուրախացուցինք,- ըսաւ Միհրանիկ:

- Փոքրի՛կս, դուն գիտե՞ս, որ աշխարհին չորս կողմը կան մարդիկ, որոնք պատառ մը հաց իսկ չունին ուտելու համար: Այս պատճառով ալ, մենք միշտ պէտք է օգտակար դառնանք անոնց, ամեն անգամ որ առիթ կը տրուի մեզի: Առնելը ուրախութիւն է, իսկ տալը՝ շա՛տ աւելին....:



22



ԿԿՈՒ

ԽԱՂԵՐ

ԲԱՑԱՌԻԿ




ԿԿՈՒ

2023

Տայել լուծէ:

Ամանորեան բառերը ամբողջացո՞ւր եւ անոնցմով գեղեցիկ նախադասութիւններ կազմե՞:



Նախադասութիւններ:

1. -
2. -
3. -
4. -
5. -
6. -
7. -
8. -



23

Յարցումներուն պատասխանելով,
լուծէ՝ հետեւեալ խաչբառը:



- 1.- Համեղ խմորեղին:
- 2.- Բոլորին սիրելի անձնաւորութիւն մը՝ որ կ'այցելէ տարին մեկ անգամ:
- 3.- Կաղանդ Պապան ունի ճերմակ -----:
- 4.- Ամէն Նոր Տարի, մենք հետաքրքրութեամբ կը պատռենք անոր թուղթը:
- 5.- Կը կախենք կրակարանին վրայ:
- 6.- Տարուան վերջին ամիսը:
- 7.- Յունուար 6:
- 8.- աշխարհին:



24



ԿԿՈՒ



Նշուած բառերը սիւնակներեն ջնջելով գտի՞ր
պահուած բառը եւ գրէ՛ զայն:

Սայլակ, Չամիչ, Կաղին, Ամանոր, Կաղանդ

Տ	Ա	Ա	Յ	Լ	Ա	Կ
Օ	Չ	Ա	Մ	Ի	Չ	Ն
Կ	Ա	Ղ	Ի	Ն	Ա	Ծ
Ա	Մ	Ա	Ն	Ո	Ր	Ա
Ռ	Կ	Ա	Ղ	Ա	Ն	Դ



Որոշէ՛ ճի՞շդ է, թէ՛ սխալ, ապա, սրբագրէ՛ սխալ
նախադասութիւնները:

- 1.- Նոր Տարին կը սկսի Դեկտեմբեր 31-ին: -----
- 2.- Ֆիսուս ծնաւ Ս. Ծննդեան օրը: -----
- 3.- Նոր Տարին կու զայ աշխան: -----
- 4.- Նոր Տարուան ընթացքին, արձակուրդներ կ'ըլլան: -----
- 5.- Կաղանդ Պապան կ'ապրի իիւսիսային բեւեռը: -----
- 6.- Կաղանդ Պապան եղնիկներ ունի: -----
- 7.- Կաղանդ Պապան նուեր կը բերէ չարերուն: -----
- 8.- Մանուկները նամակ կը գրէն տօնածառին: -----



25



ԿԿՈՒ



Կրնա՞ս երկու նկարներուն միջեւ
գտնել 15 տարբերութիւններ:



26



ԿԿՈՒ

Օգնե՛ կաղանդ պապուկին՝
ծխնելոյզեն վար իշնելու:



ԲԱՑԱՐԻԿ



ԿԿՈՒ

Կրիստոնեական լուսել:

$7 - 3 =$

$+ 5 =$

$+ 1 =$

$- 2 =$

$- 2 =$

$+ 3 =$

$= 2 +$

$- 3 =$

$+ 4 =$

$- 5 =$

$- 3 =$

$+ 4 =$

$+ 2 =$

$- 4 =$

$6 +$

$- 5 =$

$+ 4 =$

$- 3 =$

$= 5 +$

$- 4 =$

$+ 3 =$

$+ 4 =$

$- 5 =$

$- 3 =$

$+ 5 =$

$- 4 =$

$+ 3 =$

$- 5 =$

$- 3 =$

$+ 4 =$



Օգտուելով հետեւեալ բառերէն, ամբողջացն էր Յակոբին նամակը՝ ուղղուած
Կաղանդ Պապային:

Յակոբ, Եօթը, ընտանիքիս, Սուրբոյ, քոյր, Եղբայր, ինազանդ, աշխատասէր,
ուսուցիչներուս, յաջողութիւն, խաղաղութիւն

Սիրելի՛ Կաղանդ Պապա,
Իմ անունս եւ տարեկան եմ: Կ' ապրիմ
հետ, մեջ: Ունիմ մեկ եւ մեկ
:

Այս տարուան ընթացքին ես շա՛տ եւ փոքրիկ
մըն էի, ծնողքիս եւ բնա՛ւ յոգինեցուցի:

Այս տարի մաղթանքներս տարբեր են անցնող տարիներէն: Կ' աղաք' մ,
Կաղանդ Պապա, երբ որ մեր քով հասնիս, հետդ բերես ընտանիքիս՝
ուրախութիւն, ընկերներուս՝ եւ աշխարհիս՝ :

Սիրով եւ կարօտով քեզ սպասող՝
Յակոբ

Ձիւնեմարդուն երգը

ԵՍ ՓՈՔՐԻԿ ՁԻՒՆԵՄԱՐԴ ԵՍ

Ես փոքրիկ ձիւնեմարդ եմ,
Գիրուկ, կլո՛ր-մլո՛ր եմ,
Արեւուն տակ՝ չեմ խաղար,
Որպէսզի կեանքս՝ ըլլայ երկար...



27

2023



28



ԿԵՌՈՒ

ԲԱՑԱՌԻԿ



ՁԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Եկե՞ք միասին պատրաստենք ճերմակ գուլպայով ձիւնեմարդ մը ու կախենք զայն տօնածառին վրայ:

Պետք ունինք հետեւեալ իրերուն:

- Ճերմակ փափուկ գուլպայ մը:
- Բրինձ
- Փոքրիկ կոճակներ
- Գնդասեղ աչքերուն եւ քթիկին համար
- Փոքր կտոր վզնոցին համար
- Խեժ

Սկսի՞նք...

- Գուլպան կտրել այնպէս, ինչպէս ներկայացուած է նկարին մեջ:
- Կտրուած բաժիններ կարել:
- Գուլպան լեցնել բրինձով եւ վերի մասեն թելով կապել:
- Գնդասեղով ձիւնեմարդուն աչուկներն ու քթիկը տեղադրել եւ կոճակները ամրացնել:




29

ԿԵՌՈՒ

2023

Ո՞ր Կաղանդ Պապուկը տարբեր է: Ա, Բ թէ Գ:



ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ

1.- Ո՞ր երկիրէն յառաջացած է այսօրուան տօնածառ զարդարելու համաշխարհային աւանդութիւնը:

2.- Ե՞րբ յայտնուած է առաջին տօնածառը:

3.- Ինչո՞վ պատրաստուած էին առաջին արհեստական տօնածառերուն տերեւները:

4.- Ո՞ր յայտնի գիտարարին օգնականները, տօնածառը լոյսերով զարդարելու միտքը յηացան:

3- Ուղարկուած նորագույն պատրաստութեալները, միաժամանակ միասնական պատրաստութեալները:

4- Ըստ ուղարկուած նորագույն պատրաստութեալները:

2- 1901 թվականին առաջին պատրաստութեալները:

1- Պատրաստութեալները մասնակիութեալ պատրաստութեալները:



30



ԶԱԳՈՒԽՆԵՐՈՒՄ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԿՎԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ

Ծնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ:

Ինչպէս ամէն Տարի, այս տարի եւս անհամբեր կը սպասեմ քեզ: Գիտեմ որքա՞ն կը սիրես մանուկները, եւ կ’ուզես բոլորը ուրախացնել:

Այս տարի շատ աշխատասեր եւ ինազանդ եմ, թէ՛ տունը եւ թէ՛ դպրոցը: Կը խնդրեմ քեզմէ, որ ինծի բերես գեղեցիկ iPad մը:

Կաղանդ Պապա, կը մաղթեմ, որ Նոր Տարուան ընթացքին աշխարհի բոլոր մանուկները ուրախանան:

Գեղրգ Սարգիսեան
2. կարգ

Ազգ. Միացեալ ճեմարան (Դամասկոս)

Սիրելի Կաղանդ Պապուկ,
Կը մաղթեմ, որ 2023-ին աշխարհը խաղաղ ըլլայ:
Նաեւ կը փափաքիմ, որ շատ մը իհիանդութիւններու բժշկութիւն ու դարման գտնուի:

Ինչպէս նաեւ կ’ուզեմ, որ բոլորիս բերես ուրախ եւ հաճելի օրեր:

Անհամբեր կը սպասենք քեզի:

Բարտի Գասպարեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Հալեա)

Սիրելի Կաղանդ Պապա,
Ես կը փափաքիմ, որ 2023 թուականը ըլլայ յաջողութեամբ եւ առողջութեամբ լի տարի մը: Աշխարհին մէջ միշտ խաղաղութիւն ըլլայ եւ պատերազմ չըլլայ, գէշ օրերը մնան 2022 թուականին մէջ եւ Աստուած հեռու պահ մեզմէ բոլոր դժբախտ եւ չար օրերը:

Կ’ուզեմ յայտնել քեզի այս տարուան վերջին փափաք. բոլոր մարդոց երազանքները թող կատարուին եւ բարի տարի մը թող ըլլայ: Անհամբեր կը սպասեմ, որ գաս եւ բոլոր փոքրիկները ուրախացնես: Ես քեզ շատ կը սիրեմ:

Լիանա Ասատուրեան
2. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան (Հալեա)

Սիրելի Կաղանդ Պապա,
Ես քեզ շատ կը սիրեմ եւ անհամբեր եմ քեզ դիմաւորելու: Իմ փափաքն է, որ այս տարի՝ 2023-ին, լաւ, առողջ եւ յաջող տարի մը ըլլայ բոլոր փոքրիկներուն համար, նաեւ կ’ուզեմ որ Հայաստանը պահպանես թշնամիներն եւ առիթ չտաս, որ անոնք մտնեն եւ գրաւեն զայն: Կաղանդ Պապա, քեզմէ խնդրանք մը ունիմ՝ մեր նուերներն աւելի մեծ նուերներ բեր Հայաստանի ու Արցախի փոքրիկներուն եւ ուրախացո՛ւր զիրենք:

Գառնի Պետրոսեան

2. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան
(Հալեա)

Սիրելի Կաղանդ Պապա,
Ահաւասիկ մօտեցաւ մեր շա՛տ-շա՛տ սիրելի տօնը՝ Կաղանդը: Տօնածառին լոյսերը կը փայլին, աստղերը կը պսպղան, իսկ խաղալիքները կը փայլիլին:
Կաղանդ Պապա, ես անհամբեր կը սպասեմ քեզի, որպէսզի գեղեցիկ նուերներով ուրախացնես մեզ եւ քու ներկայութեամբ շերմացնես մեր հոգիները՝ նոր յոյսերով ու երազներով դիմաւորելու Նոր Տարին:

Մաղթանք է, որ Նոր Տարին իր հետ բերէ երշանկութիւն, առողջութիւն եւ յաջողութիւն բոլոր մարդկութեան:

Արփի ճանսըգեան

2. կարգ

Ազգ. Միացեալ ճեմարան (Դամասկոս)





ՆԱՄԱԿ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՅԻՆ



Բարեւ Սիրելի Կաղանդ,
Օրացոյցին թերթիկները մեկիկ-մեկիկ փրցուցինք, հասանք
Դեկտեմբերին:

Առանց բացառութեան մեծ ու փոքր քեզի կը սպասենք
անհամբեր:

Ծուտով արդեն Ամանոր է:

Թեեւ վաղուց արդեն փոքր չենք,

Բայց իրաքանչիւրս ունի ցանկութիւն եւ երազանք,

Քեզի կը դիմենք աւանդոյթ դարձած նամակ գրելով,

Ու կը հաւատանք, որ կ'իրականացնես մեր փափաքները
բարի հոգիով:

Մեկ ամիսէ ի վեր խանութ, տօնածառ զարդարուած են քաղաքի տարածքին,
Երեխաները անհամբերութեամբ կը սպասեն Կաղանդի գիշերին,
Որ ստանան Կաղանդ Պապային բերած,
Ամանորի ծառին տակ դրած՝ նուերները թանկագին:

Ճիմա կարգն է իմ ցանկութեան, որ յատուկ է, արդիական,
Ինչպէս զսպել չարկամութիւն, ու սերմանել սէր, միութիւն,
Մարդիկ շատ են չարացած, յարգանք, ակնածանք չէ մնացած,
Նիւթին, նիւթականին գերի դարձած,
Ազգ, ազգութիւն, հաւատք, կրօնք ետին թողած,
Հող, Հայրենիք ծախու հանած...:

Ընթերցողներ, Եկէք դիմենք ու հաւատանք Ամանորին,
Որ ունակ է վերջ դնելու այս բոլորին...

Ո՛վ ճերմակ մազով ու մօրուքով, իրաշագործ Կաղանդ Պապա,
Ծանր բեռը առած ուսիր, կը շրջիս երկրե-երկիր, կու տաս խրատ, կու տաս ընծայ,
Եթէ կը յիշես, ամէն տարի քեզի նամակ կը գրեմ ես,
Ու անձկութեամբ կը սպասեմ, որ ցանկութիւններս ամբողջութեամբ կատարես:

Աղերսելով՝ Աստուծոյ եւ քեզի կը դիմեմ,
Մեր յոնովուրդը յուզող խնդիրները լուծել կը խնդրեմ,
Հայաստանին, Արցախին, Սփիլորին բաշխեցէք կայուն միասնութիւն,
Հայրենիքին, ողջ աշխարհին խաղաղութիւն,
Տարաբախտ ազգիս՝ ՀԱՅԱՏՔ, ՍԵՐ, ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ:

Աւո ճերմակեան
Թ. կարգ

Ազգ. Ս. Նահատակաց Վարժարան (Լաթաքիա)

Ահաւասիկ տարուան ամենաշատ սիրուած եւ սպասուած տօնը՝
Կաղանդը, արդեն շատ մօտ է ...

Մեծ ու փոքր կը պատրաստուինք եւ խանդավառ կը սպասենք այդ օրուան,
որպէսզի մեր ընտանիքին եւ սիրելիներուն հետ տօնական սեղանին շուրջ
նստինք, ուտենք, խմենք եւ ամենակարեւորն ու հաճելին, որպէսզի Կաղանդ
Պապային բերած նուերները բանանք եւ մտերմիկ ժամանակ անցընենք:

Ինչպէս գիտենք, բոլոր մանուկները նամակ կը գրեն Կաղանդ Պապային՝
Նշելով իրենց փափաքները, մաղթանքները եւ երազանքները:

Ես ալ այսօր, որպէս իինգերորդ դասարանի աշակերտուիի, որոշեցի
մաղթանքներս թուղթին արձանագրել եւ յանձնել Կաղանդ Պապային՝
յուսալով, որ ան կը կարդայ գրած տողերս եւ կ'իրականացնե
մաղթանքներս: Առաջին հերթին առողջութիւն եւ խաղաղութիւն կը խնդրեմ
համայն ժողովուրդին: Կը մաղթեմ, որ այլէս նեղ օրեր չապրինք: Ուրախ եւ
երջանիկ տարի մը դիմաւորենք:

Սալբի Գալայճեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Հալեա)

Շատ սիրելի՝ Կաղանդ Պապա,
Անսահման կարօտով եւ անհամբեր
կը սպասեմ գալուր: Գիտեմ, որ կը լսես
մեր խնդրանքները եւ հրաշքով
կը կատարես զանոնք: Այս տարուան
խնդրանքս տարբեր է, նուերիս կողքին
կ'ուզեմ, որ մեզմտ հեռացնես ամեն
տեսակի չարիք, փոխարենը խոշոր
տոպարակին մէջ լեցուր սէր,
ուրախութիւն, առողջութիւն,
խաղաղութիւն եւ լաւ բաներ,
առատապէս բաշխէ աշխարհի բոլոր
մարդոց, որպէսզի ուրախութեամբ,
նոր յոյսերով ու իղձերով դիմաւորենք
Նոր Տարին:

Թող տօնական խնդրութիւնն ու
բերկրանքը լեցնեն բոլոր
մանուկներուն սրտերը եւ
ուրախութեամբ ապրին ամբողջ
տարին:

Սարգիս Արաքելեան
Զ. կարգ

Ազգ. Միացեալ ճեմարան
(Դամասկոս)

Շատ կը սիրեմ քեզ, Կաղանդ
Պապա,
Անհամբեր կը սպասեմ գալուր,
որ նուերներովդ ուրախացնես մեզ:
Արդեն մեծացած եմ մէկ տարի
ալ, դասերս լաւ ապէս
կը պատրաստեմ, ինազանդ ու
բարի եմ:

Այս տարի նուերներուդ հետ բեր
նաեւ շատ սէր եւ երջանկութիւն, որ
աշխարհի բոլոր մանուկները
ուրախութեամբ լեցուն նոր Տարի
մը ունենան:

Նարեկ Լափայեան
Զ. կարգ

Ազգ. Միացեալ ճեմարան
(Դամասկոս)



Սիրելի՝ Կաղանդ Պապա,
Ամեն տարուան պէս այս տարի ալ
փոքրիկները անհամբեր կը սպասեն
քեզի, որ զիրենք ուրախացնես եւ
նուերներ բերես:

Ես ալ ի ր են ց նման քեզի
կը սպասեմ, որ Ամանորը տօնենք եւ
ուրախ ժամանակ անցընենք
միասին, երգենք, պարենք, եւ
զուարճանանք ու մանաւանդ
նուերներ ստանանք:

Բայց Կաղանդ Պապա,
նուերներուն կողքին չմոռնաս
հետո բերել առողջութիւն,
համերաշխութիւն, հաշտութիւն,
յաջողութիւն եւ խաղաղութիւն
մանաւանդ Յայաստանին,
Արցախին եւ Սուրբոյ:

Թող ոչ մեկ մանուկ մնայ անտուն,
տխուր, իհւանդ կամ անօթի: Մեծ ու
փոքր դիմաւորենք Նոր Տարին
ամենալաւ պայմաններով՝
ընտանիքներով, հարազատներով
եւ սիրելիներով շրջապատուած:

Քեզ անհամբեր սպասող՝
Ժողեք Քահրենեան

Ե. կարգ
Ազգ. Միացեալ Նախակրթարան
(Յալեա)

Սիրելի՝ Կաղանդ Պապուկ,
Ահա եկաւ Նոր Տարին երգ ու
տաղով, այցելութեանդ ուրախ լուրը
տարածեց ողջ աշխարհը:
Սիրասուն մանուկները խինդ ու
ծիծաղով անհամբեր կը սպասեն
քեզի եւ գեղեցիկ նուերներուդ: Ինչ
ազնիւ ու բարի հոգի ունիս,
Կաղանդ Պապուկ, մեզ երբեք չես
մոռնար, ամեն տարի կ'այցելես եւ
առ ա տ - ա ռ ա տ ն ո ւ ե ր ն ե ր ո ն
կը բաշխես բոլորիս՝ ըլլանք բարի,
թէ չարաճի: Արդեն շատունց
զարդարած եմ մեր տան
տօնածառը, գունագեղ
ժապաւեններով, պապուն լոյսերով
ու զանզակներով, եւ պատրաստ ես
ընդունելու քեզ, որ ներկայութեամբդ
աւելի շերմացնես մեր տան
մթնոլորտը:

Կը փափաքիմ, որ աշխարհին մեջ
տիրէ խաղաղութիւն, սէր եւ
ուրախութիւն: Թող Նոր Տարին
իրականացնե բոլորին
բաղձանքները: Աստուած
պահպանէ եւ օրինէ ընտանիքս ու
հարազատներս:

Սոնա Պաղտասարեան
Զ. կարգ
Ազգ. Միացեալ ճեմարան
(Դամասկոս)

Կաղանդ եր: Առառու կանուխ արթնցայ այդ օրը: ԶԵ՞ որ Կաղանդ Պապան
այցի պիտի գար մեզի եւ խնդրած նուերս բերեր:

Օրեր առաջ արդէն տօնածառը գրաւած էր հիւրասենեակին մեկ անկիւնը,
գոյնզգոյն զարդերով ու պապուն լոյսերով Նոր Տարուան ուրախ լուրը
կ'աւետէր, ու նոր երազանքներով կը լեցնէր մեր հոգիները:

Դուրսը կը տիրէր հեքիաթային գեղեցկութիւն մը:

Փողոցներն ու մայթերը, ծառերուն մերկ ճիւղերն ու ծաղիկները սահիտակ
զգեստ հագած էին, ծիւնը պատած էր չորս դին ամբողջ: Դուրսի ճիւնապատ
տեսարանը եւ ներսի շերմ մթնոլորտը իրարու խառնուած հոգիս
պարութեցին անսահման ցնծութեամբ: Սակայն ցուրտ ու պաղ եղանակը
մղեց զիս մտածելու, այս բոլոր որք ու աղքատ մանուկներուն մասին, որոնք
թերեւս տաքուկ հագուստներ կամ ուտելիք չունին:

Ես թանկարժեք նուերներ չեմ ուզեր Կաղանդ Պապային, այլ կ'ուզեմ, որ
այցելէ անպաշտապան մանուկներուն եւ ուրախացնէ զանոնք իր նուերներով,
որպեսզի աշխարհի բոլոր մանուկները սէր, ուրախութիւն եւ գուրգուրանք
վայելեն գեթ Նոր Տարուան գիշերը:

Յայկ Այնթապեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ ճեմարան (Դամասկոս)

Ճնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Ահաւասիկ 2022 տարին կը հասնի իր աւարտին եւ շուտով կը մօտենայ
տարուան ամենէն գեղեցիկ ու սիրելի տօնը՝ Ամանորը:

Արդեն շատունց զարդարած ենք տօնածառը, որուն տակ գետեղած ենք
Յիսուս Մանուկին ծնունդը ալետող քարայրը եւ փայլուն աստորը:

Սիրելի՝ Կաղանդ Պապա, թանկարժեք նուերներ չեմ ուզեր, միայն
կը խնդրեմ, որ մեզմէ հեռացնես չար բաները եւ ուրախութիւն ու երշանկութիւն
բաշխես ընտանիքիս անդամներուն եւ աշխարհի բոլոր մանուկներուն:

Քեզ շատ սիրող՝
Թիթառ Փամպութեան
Հ. կարգ

Ազգ. Միացեալ ճեմարան (Դամասկոս)





Սիրելի՝ Կաղանդ Պապա,
Եւ վերջապէս եկաւ սպասուած ամիսը: Տասներկու ամիսներէն
ամենալուսաւոր, հետաքրքրական եւ փայլուն ամիսն է Դեկտեմբերը:

Այս ամիս ողջ աշխարհը գեղեցիկ ու զարդարուած կ'ըլլայ:

Փոքրիկները անհամբեր կը սպասեն, թէ երբ Զմեռ Պապիկը պիտի գայ եւ
վերջապէս ստանան իրենց նուերները: Իսկ այս անգամ իմ խնդրանքն է, բացի
նուերներէն խաղաղութիւն շնորհես Հայաստանին եւ բոլոր երկիրներուն:
Պատերազմներէն միայն չարիք կը ծնի:

Հրանդ Կիրակոսեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Յալէա)

Սիրելի՝ Կաղանդ Պապուկ,

Ես եւ աշխարհի բոլոր փոքրիկները անհամբեր կը սպասենք քեզի, որպէսզի
քեզ տեսնենք եւ ուրախանանք, որովհետեւ դուն շատ բարի ես եւ քու առատ
նուերներով բոլոր բարիները կ'ուրախացնես:

Բայց այս տարի ես միայն խաղալիքով չէ որ պիտի ուրախանամ: Կ'ուզեմ
բոլոր չարերուն սրտերը մեղմացնես եւ սիրով լեցնես, որ աշխարհի մէջ սէրը
յաղթէ եւ բոլոր ուրախ, խաղաղ եւ առողջ ապրինք:

Քեզ շատ սիրո՞՝
Հրանդ Բանոյեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Յալէա)

Ես արդէն մեծացած եմ եւ Զմեռ Պապուկէն ո՛չ մէկ բան կ'ուզեմ:
Միայն կ'ուզեմ, որ մէր երկրին մէջ պատերազմ չըլլայ:

Կ'ուզեմ, որ մէր երկրին ու հայրենիքն մէջ տիրեն
խաղաղութիւնն ու համերաշխութիւնը: Մեր երկիրն ու
Հայաստան աշխարհը միշտ ըլլան հզօր, անկախ, ազատ եւ
բարգաւաճ:

Մեր հայ զինուորները մնան առողջ, քաջ, անվախ եւ խիզախ,
որպէսզի կարենան պաշտպանել մէր հայրենիքն ու ժողովուրդը
եւ անփորձանք վերադառնան իրենց տուները:

Գառնի Միրուն Քելաղայեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Յալէա)

Ահա մօտեցան Նոր Տարուան տօնական օրերը, երբ բոլորս անհամբեր
կը սպասենք մէր սիրելի՝ Կաղանդ Պապային:

Սիրելի՝ Կաղանդ Պապա,

Մենք բոլոր պատրաստ ենք քեզ ընդունելու եւ անհամբեր կը սպասենք, որ
կատարես մէր բոլոր փափաքները: Յիմա, շատերուն նման, իմ ալ երազանքն է,
որ խաղաղութիւն բերես բոլոր աշխարհին, երբեք պատերազմ չըլլայ, մարդոց
սրտերը լեցուին սիրով եւ բոլոր մասնուկները ապրին առողջ եւ ուրախ:

Իսկ մնացեալ ցանկութիւններս քեզի կը գրեմ միւս նամակիս մէջ, որ
կը գտնես տօնածառին տակ:

Քեզ շատ կը սիրեմ եւ միշտ կը սպասեմ քեզի, իմ շատ սիրելի Կաղանդ
Պապա:

Ընորհաւոր ձեր Նոր Տարին:

Ալին Տալգինեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Յալէա)

Շատ սիրելի՝ եւ կարօտալի՝ Կաղանդ Պապա,

Ես այսքան կը սիրով քեզ, որ անհամբեր կը սպասեմ տարուան վերջին
օրուան՝ Դեկտեմբեր երեսունմեկին, որպէսզի տեսնեմ քեզ եւ ուրախանամ քու
գալուստովիդ եւ ըստմ քեզի «բարի եկար, հազար բարի, Կաղանդ Պապա»:

Այս տարի կը խնդրեմ քեզմէ, որ ինծի բերես վարդագոյն պուարիկ մը, որ
միշտ յիշեմ քեզի սիրով ու կարօտով:

Քեզ սիրո՞ եւ անհամբեր սպասո՞՝
Անսա-Մարիա Քըրքմզեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Յալէա)

Սիրելի՝ Կաղանդ Պապա,

Կը փափաքիմ, որ մաղթանքներս կատարուին:

Կ'ուզեմ աշխատասէր, կոկիկ, սիրուն եւ կարգապահ
ըլլալ:

Կը խնդրեմ, որ աշխարհի բոլոր ժողովուրդները
խաղաղութեամբ ապրին:

Կը փափաքիմ, որ այս տարուան նուերս ըլլայ իմաստալից
բան մը, բայց այդ չեմ գիտեր, թող անակնկալ ըլլայ:

Վարդիթեն Տաղլեան
Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Յալէա)





Տարուան ամենէն շատ սիրուած եւ սպասուած տօները կը մօտենան՝
Կաղանդն ու Սուրբ Ծնունդը:

Այս տարի կը փափաքիմ, որ աշխարհին բոլոր երեխաները երբեք զրկանք
չտեսնեն եւ միշտ ուրախ ըլլան: Կը մաղթեմ նաեւ սեր, առողջութիւն,
յաջողութիւն եւ խաղաղութիւն աշխարհի բոլոր մարդոց:

Յովիկ Խաչերեան

2. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Հալեպ)

Յարգելի՝ Կաղանդ Պապա,

Կը ցանկամ, որ նուերի փոխարէն աշխարհիս խաղաղութիւն բերես, նաեւ
կը փափաքիմ, որ իմ կարօսցած բոլոր հարազատներուս միանամ, որպէսզի
Նոր Տարին ինծի համար դառնայ լաւ եւ ուրախ յուշերով տարի մը:

Քեզ անհամբեր սպասող՝

Լուսինէ Կարապետեան

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Հալեպ)

Բարեւ Կաղանդ Պապա, անունս Մայլա Նաճարեան է:

Ես 10 տարեկան եմ, Ե. կարգի աշակերտուիի:

Ճատ կը սիրեմ Կաղանդը: Իմ սիրած տօնն է, որ ամեն տարի ընտանիքիս
հետ կը տօնեմ: Միասին լաւ ժամանակ կ'անցընենք, երբ դուն ամեն տարի
գաս՝ մեզի նուերներ կը բերես: Այդ նուերները մեզ շատ կ'ուրախացնեն: Դուն
շատ բարի անձ մըն ես, Կաղանդ Պապա: Ես քեզ շատ կը սիրեմ: Այս տարի
իմ խնդրանքն է, որ առողջութիւն եւ սեր բաշխես բոլորիս:

Մայլա Նաճարեան

Ե. կարգ

Ազգ. Միացեալ Նախակրթարան (Հալեպ)

«ԿԿՈՒ» 2023-ի

բացառիկ պատրաստեց՝
Մարմանդ Աշոտեան-Շահինեան

Նկարագրեց եւ ձեւարեց՝
Ռաֆֆի Քէշիշեան

